ՏԵՂԵԿԱՆՔ

ԼՐԱՑՎԱԾ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 14.1. Գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրման պարտականությունը

Կարգավորվող անձի իրական սեփականատերերը, հիմնադիրները (մասնակիցները), գործադիր մարմինը պարտավոր են հայտարարագիր ներկայացնել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին:
Սույն մասում նշված անձանց կողմից հայտարարգրի ներկայացման գործընթացի վրա տարածվում են «Հանրային ծառայության մասին» օրենքի 38-42-րդ հոդվածների պահանջներն այնքանով, որքանով կիրառելի են նշված անձանց կողմից հայտարարագիր ներկայացնելու իրավահարաբերությունների վրա: